



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՓԲԸ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ստանդարտների ազգային ինստիտուտի 2015թ. գործունեության վերաբերյալ

Տնօրեն՝ ԵՆՈՔ ԱԶԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

մարտ, 2016



ISO 9001:2000 CERTIFIED



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	2
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	7
1.1. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԿ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ	7
1.2. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ	7
1.3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	8
2. ՍՏԱՆԴԱՐՏ ԱՑՄԱՆ ԱՇԽԱՏ ԱՆՔՆԵՐԸ	18
2.1. ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ	18
2.2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ ԱՑՄԱՆ ԱՇԽԱՏ ԱՆՔՆԵՐ	21
2.3. ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ	22
3. ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏ ՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏ ԱՆՔՆԵՐԸ	25
3.1. ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ	25
3.2. ՍՆՆԴԻ ԵՎ ՈՉՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ	25
3.3. ՆԱԿԹԱՍԹԵՐՔՆԵՐԻ ԵՎ ՖԻԶԻԿԱՔԻՄԻԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ	26
4. ՀԱՄԱՊԱՏ ԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏ ԱՆՔՆԵՐԸ	27
4.1. ՀԱՄԱՊԱՏ ԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏ ԱՆՔՆԵՐ	27
4.2. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ	28
5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	29
6. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	30
7. 2016-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ	32

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ
2015թ. գործունեության վերաբերյալ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, շահույթ ստանալու նպատակ հետապնդող առևտրային կազմակերպություն է: Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների ու ծախսերի նախահաշիվ և բանկային հաշիվ:

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ինստիտուտ) գործունեությունն ընդգրկում է 4 հիմնական ոլորտներ՝ ստանդարտացման աշխատանքներ, համապատասխանության հավաստման, այդ թվում՝ պարենային և ոչ պարենային ապրանքների, հանրային սննդի ծառայությունների և կառավարման համակարգերի սերտիֆիկացման աշխատանքներ, լաբորատոր փորձարկումներ և ուսուցման կազմակերպում:

Սույն հաշվեկշիռն ընդգրկում է նշված ոլորտներում Ինստիտուտի կողմից 2015թ. հունվարի 1-ից մինչև 2016թ. հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացված գործունեությունը, Ինստիտուտի ինստիտուցիոնալ կառուցվածքի վերափոխումների և ֆինանսական արդյունքների մասին հաշվեկշիռն:

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է իր կանոնադրությամբ և հետևյալ հիմնական իրավական ակտերով՝

1. «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենք
2. «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենք
3. «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենք
4. ՀՀ կառավարության 16.12.2010թ. թիվ 1693-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքի բարեփոխման 2010-2020թթ. ռազմավարությամբ»
5. ՀՀ կառավարության 2015 թվականի մայիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքի բարեփոխման 2015 թվականի ծրագիրը և որակի ենթակառուցվածքի բարեփոխման 2015 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N 548-Ա որոշման
6. «Ստանդարտների մշակման ծառայությունների ծրագիրը և ստանդարտացման աշխատանքների ցանկը հաստատելու մասին» ամենամյա ՀՀ կառավարության որոշումներով (օրինակ՝ ՀՀ կառ. 2015 թվականի հունիսի 4-ի N 614-Ա որոշում)
7. ՀՀ կառավարության 26.02.1998թ. «Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության ամենամյա մրցանակներ սահմանելու և շնորհելու մասին» թիվ 116 որոշում
8. ՀՀ կառավարության 2004 թվականի հունիսի 10-ի «Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում ՀՀ կառավարության ամենամյա մրցանակների շնորհման կարգը հաստատելու մասին» N 890-Ն որոշում
9. Տեխնիկական կանոնակարգերը հաստատող ՀՀ կառավարության որոշումներ և այլն:

Ստանդարտների ազգային ինստիտուտի ռազմավարական նպատակներն են՝

- Խթանել հայկական ապրանքատեսակների առևտուրը միջազգային շուկաներում,
- Երաշխավորել ազգային ստանդարտների շարունակական բարելավումը և համապատասխանեցումը փոփոխվող պահանջներին,
- Բարձրացնել ազգային ստանդարտների ընկալումը, ճանաչումը և կիրառումը,
- Բացահայտել և լուծումներ առաջարկել այն ազգային խնդիրների վերաբերյալ, որոնք կարող են կարգավորվել ստանդարտների և համապատասխանության գնահատման ընթացակարգերի միջոցով:

Ստանդարտների ազգային ինստիտուտը, որը միջազգային շրջանակներում հայտնի է իր «SARM» հապավումով, այն է՝ «Հայաստանի ստանդարտներ», իր մեջ ներառում է գործունեության հետևյալ հիմնական ծառայությունները.

- Ստանդարտացման, այդ թվում՝ ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդի վարման ծառայությունները,
- Համապատասխանության հավաստման (սերտիֆիկացման), այդ թվում՝ կառավարման համակարգերի սերտիֆիկացման ծառայությունները,
- Պարենային և ոչ պարենային ապրանքների, այդ թվում՝ նավթամթերքի և էլեկտրատեխնիկական լաբորատոր փորձարկումները,
- Ուսումնական կենտրոնը:

Բոլոր ծառայությունները ղեկավարվում են համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների կողմից՝ ՍԱԻ-ի տնօրենի համակարգման ու ղեկավարման ներքո: Բոլոր ուղղություններով գործունեության պատասխանատվությունը կրում է ՍԱԻ տնօրենը:

Գործունեության կարևորագույն ուղղություններից է ստանդարտացման ոլորտում միջազգային համագործակցությունը: Ստանդարտների ազգային ինստիտուտը 1997թ-ից ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը **ԻՍՕ (ISO) միջազգային ստանդարտացման կազմակերպությունում լիիրավ անդամի** և 2008 թվականի հունվարի 1-ից **ՍԵՆ (CEN) Ստանդարտացման Եվրոպական կոմիտեում՝ միացող (affiliate) անդամի** կարգավիճակով: Միաժամանակ ակտիվորեն մասնակցում է ԻՍՕ-ի և ՍԵՆ-ի տեխնիկական հանձնաժողովների և ենթահանձնաժողովների աշխատանքներին:

Ստանդարտների ազգային ինստիտուտը, որպես ստանդարտացման ազգային մարմին 1992թ.-ից անդամակցում և մասնակցում է ԱՊՀ մասնակից-պետությունների **Սփանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման միջպետական խորհրդի (ՍՀՍ ՄՊԽ)** ստանդարտացման կոմիտեների աշխատանքներին:

Ինստիտուտի գործունեության ուղղություններում կարևոր տեղ են զբաղեցնում ազգային (ՀՍ), միջպետական (ԳՕՍ) ստանդարտների մշակումը և փորձաքննությունը, միջազգային (ԻՍՕ) և եվրոպական (ԵՆ) ստանդարտների նախագծերի փորձաքննության կազմակերպումը, ազգային ստանդարտների նախապատրաստումը և ընդունումը, ինչպես նաև ստանդարտացման բնագավառի գիտա-մեթոդական աշխատանքները: Ինստիտուտը կորրեկցիանցում է ՀՀ տարածքում գործող ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքները:

Ստանդարտների ազգային ինստիտուտը ձևավորում և վարում է Հայաստանի Հանրապետության ստանդարտների ազգային ֆոնդը, որը համալրված է շուրջ 33000 միավոր

ստանդարտացման փաստաթղթերով, այդ թվում՝ միջազգային (ԻՍՕ), եվրոպական (ԵՆ), միջպետական (ԳՕՍՏ), Հայաստանի Հանրապետության ստանդարտներով (ՀՍ) և այլ պետությունների ստանդարտներով:

Ազգային ֆոնդի վարման և տեղեկատվության ապահովման աշխատանքների ավտոմատացման նպատակով ՀՀ-ում գործող ստանդարտների մատենագիտական տվյալների հիման վրա 1993թ. հետո ստեղծվել և ներդրվել է տեղեկատվական որոնման էլեկտրոնային համակարգ “SARM”, որը հնարավորություն է տալիս կազմակերպություններին և անհատներին փնտրել և ձեռք բերել իրենց գործունեության համար անհրաժեշտ նորմատիվ փաստաթղթեր:

Ինստիտուտն ունի հավատարմագրված արտադրանքի, ծառայությունների և կառավարման համակարգերի (ԻՍՕ 9000, ԻՍՕ 14000 և ԻՍՕ 22000) սերտիֆիկացման մարմիններ, որոնք իրականացնում են նշված ոլորտների համապատասխանության հավաստման աշխատանքներ, ինչպես նաև լայն անվանացանկի արտադրատեսակների փորձարկումներ:

Ընկերության ուսումնա-մեթոդական կենտրոնում կազմակերպվում է առանձին ստանդարտարտների կիրառման վերաբերյալ հետաքրքրված անձանց ուսուցում:

Ստորև ներկայացվում են Ինստիտուտի գործունեության վերաբերյալ որոշ հակիրճ տեղեկություններ:

ՍԱԻ (SARM)-ը թվերով

- | | |
|---|---|
| Ստանդարտացման ազգային (հայելային) տեխնիկական հանձնաժողովները (ՏՀ) | <ul style="list-style-type: none"> - 25 ՏՀ-ներ, որոնց կազմում ընդգրկված են ավելի քան՝ <ul style="list-style-type: none"> - 450 փորձագետ - 250 շահագրգիռ կազմակերպություններ (պետական մարմիններ, մասնավոր և հասարակական կազմակերպություններ, այլ) - 100 ՏՀ և ԱԽ նիստ և քննարկում՝ տարեկան - Ազգային ՏՀ-ները հանդիսանում են հայելային ՏՀ-ներ՝ <ul style="list-style-type: none"> - 37 ԻՍՕ ՏՀ-ների (լիիրավ) - 26 ԻՍՕ ՏՀ-ների (դիտորդ) - 3 ՍԵՆ ՏՀ-ների (դիտորդ) - 18 ԱՊՀ ՍՉՍ ՄՊԽ ՏՀ-ների - 1 ԱՊՀ ՍՉՍ ՄՊԽ ՏՀ-ների (դիտորդ) |
|---|---|

- | | |
|-------------|---|
| Բաժանորդներ | <ul style="list-style-type: none"> - 40 կազմակերպություն, - մշտական խորհրդատվություն՝ ոլորտային ստանդարտների վերաբերյալ |
|-------------|---|

Ազգային գործող ստանդարտներ՝

- | | |
|---|---|
| ՀՀ ստանդարտների մշակումը 2015 թվականի ընթացքում | <ul style="list-style-type: none"> - Ջուտ ազգային (ՀՍ)՝ 8 հատ, - Միջազգայինից փոխակերպված (ՀՍ ԻՍՕ)՝ 29 հատ, - Եվրոպականից փոխակերպված (ՀՍ ԵՆ)՝ 76 հատ - Միջպետական ստանդարտներ՝ 876, որից ԳՕՍՍ՝ 660 հատ, ԳՕՍՍ ԵՆ՝ 27 հատ, ԳՕՍՍ ԻՍՕ 131 հատ, ԳՕՍՍ ԻԷԿ 58 - Ռուսաստանի Դաշնության ստանդարտներ՝ 344 հատ, որից ԳՕՍՍ Ռ-269, ԳՕՍՍ Ռ-ԻՍՕ 53, ԳՕՍՍ Ռ-ԵՆ 7, ԳՕՍՍ Ռ-ԻԷԿ 15 <p>Ընդամենը՝ 1333 հատ</p> |
|---|---|

Ազգային գործող ստանդարտներ՝

- | | |
|---------------------------------|--|
| Ընդամենը 1993-2015 թթ ընթացքում | <ul style="list-style-type: none"> - Ջուտ ազգային (ՀՍ)՝ 360 - Միջազգայինից փոխակերպված՝ 504
<i>այդ թվում՝</i>
ՀՍ ԻՍՕ - 429,
ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ - 51,
ՀՍ ԻԷԿ - 1,
ԻՍՕ - 7,
ՀՍ ՕՀՍԱՍ - 1,
ՀՍ (ԻՍՕ) - 13,
ՀՍ (ԻՍՕ/ԻԷԿ) - 2 հատ, - Եվրոպականից և այլ երկրներից փոխակերպված՝ 229
<i>այդ թվում՝</i>
ՀՍ ԵՆ 223,
ՀՍ ԵՏՍԻ ՍՍ - 4,
ՀՍ ԱՆՍԻ - 1,
ԵՆ - 1. - Միջպետական ստանդարտներ (ԳՕՍՍ)՝ 4369
<i>այդ թվում՝</i>
ԳՕՍՍ - 2963, |
|---------------------------------|--|

ԳՕՍՏ ԻՍՕ - 352,
 ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ - 5,
 ԳՕՍՏ ԵՆ - 172,
 ԳՕՍՏ ԻԷԿ - 356,
 ԳՕՍՏ (ԻՍՕ) - 344,
 ԳՕՍՏ (ԻԷԿ) - 123,
 ԳՕՍՏ (ԵՆ) – 11,
 ԳՕՍՏ (ԻՍՕ/ԻԷԿ) - 3,
 ԳՕՍՏ (Կանոններ ՄԱԿ ԵԷԿ) - 3,
 ԳՕՍՏ (ՍԻՍՊՌ) - 2,
 ՀՍ ԳՕՍՏ - 33,
 ՀՍ (ԳՕՍՏ) – 2.

- ՌԴ ազգ. ստանդարտ. փոխակերպված (ՀՍ ԳՈՍՏ Ռ)' 1309, այդ թվում՝

ՀՍ ԳՕՍՏ Ռ - 945,
 ՀՍ ԳՕՍՏ Ռ ԻՍՕ - 100,
 ՀՍ ԳՕՍՏ Ռ ԻՍՕ/ԻԷԿ - 2,
 ՀՍ ԳՕՍՏ Ռ ԻԷԿ - 132,
 ՀՍ ԳՕՍՏ Ռ ԵՆ - 60
 ՀՍ ԳՕՍՏ Ռ (ԻՍՕ) - 15,
 ՀՍ ԳՕՍՏ Ռ (ԻԷԿ) - 44,
 ՀՍ ԳՕՍՏ Ռ (ԵՆ) - 1,
 ՀՍ ԳՕՍՏ Ռ (Կանոններ ՄԱԿ ԵԷԿ) - 3,
 ՀՍ ԳՕՍՏ Ռ (ԴԻՆ) - 4,
 ՀՍ ԳՕՍՏ Ռ (ՍԻՍՊՌ) – 3.

Ընդամենը՝ 6771 ազգային ստանդարտ

Համագործակցություն

ՍԱՐՄ-ը անդամակցում է՝
ԻՍՕ-ին 1997թ.-ից (լիիրավ)
ՍԵՆ-ին 2007 թ.-ից գործընկեր, իսկ 2008 թ.-ից միացող անդամ
ԱՊՀ ՍՉՍ ՄՊԽ ստանդարտացման բյուրոին 1992թ.-ից

Տեխնիկական
 ինֆորմացիայի
 էլեկտրոնային
 հասանելիությունը

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ ստանդարտացման գործունեության ողջ ինֆորմացիան հասանելի է առցանց www.sarm.am հասցեով:
 Օգտվողները այստեղ կարող են գտնել.
 - ստանդարտների կիրառման վերաբերյալ տվյալներ
 - ստանդարտների նախագծեր

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.1. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվեց ՀՀ կառավարության 16.12.2010թ. թիվ 1693-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքի բարեփոխման 2010-2020թթ. ռազմավարությամբ» սահմանված բարեփոխումների միջոցառումների իրականացումը: Այդ ռազմավարության նպատակն է՝ ապահովել ազգային որակի ենթակառուցվածքի զարգացման հեռանկարային ուղղվածությունը և գոյություն ունեցող համակարգը բարեփոխել այնպես, որ այն համապատասխանի միջազգային և եվրոպական պահանջներին: Այս բարեփոխումը նախատեսում է տեխնիկական կանոնակարգման, ստանդարտացման, չափագիտության, հավատարմագրման, փորձարկման, տեխնիկական հսկողության, սերտիֆիկացման և շուկայի վերահսկողության ոլորտներում իրավական, ինստիտուցիոնալ կարողությունների հզորացմանը և իրազեկության բարձրացմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Ռազմավարությունը, որն իրականացվելու է մինչև 2020թ., նախատեսում է աստիճանական համապատասխանեցում եվրոպական պահանջներին և Հայաստանի որակի ենթակառուցվածքի լիակատար ինտեգրում գլոբալ համակարգին:

1.2. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտի կառուցվածքը և հաստիքացուցակը ենթարկվեցին փոփոխությունների, որոնք ուղղված էին ընկերության գործունեության արդյունավետության բարձրացմանը, հաստիքացուցակի վերանայմանը և աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսերի կրճատմանը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2015 թվականի հունիսի 1-ի թիվ 704-Ա հրամանով հաստատվեց Ինստիտուտի նոր կառուցվածքը և հաստիքացուցակը: Միաժամանակ, հիմնվելով ընկերության գործունեության փաստացի արդյունքների վրա, նշված հրամանով սահմանվեց նաև 2015թ. եկամուտների կանխատեսումը և ծախսերի նախահաշիվը:

Հաստիքացուցակով նախատեսված է 116 հաստիք: Միաժամանակ, հաստիքների համար նախատեսված աշխատավարձի դրույքաչափերը մասնակիորեն ենթարկվել են փոփոխության՝ միայն ղեկավար պաշտոնների մասով: Ըստ էության, նոր կառուցվածքում և հաստիքացուցակում տեղ գտած հիմնական փոփոխությունը վերաբերվում է Լաբորատոր փորձարկումների կենտրոնի վերակազմակերպմանը առանձին 4 լաբորատոր միավորների, ինչը պայմանավորված է լաբորատորիաների հավատարմագրման պահանջներով և կհանգեցնի դրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Հաշվետու եռամսյակում Ինստիտուտն աշխատանքներ է իրականացրել կադրային ու փաստաթղթաշրջանառության գործունեության կազմակերպման ոլորտում, ինչը կապված էր ընկերության նոր կառուցվածքի և հաստիքացուցակի սահմանման հետ:

Մշակվել և հաստատվել են բոլոր հաստիքների նոր պաշտոնեական հրահանգները և բոլոր ստորաբաժանումների գործունեության կանոնակարգերը:

Աղյուսակ 1-ում բերվում է ՍԱԻ ընկերության հաստիքային աշխատողների թվաքանակի և միջին աշխատավարձի 2011-2015թթ. դինամիկան:

**Ինստիտուտի հաստիքային աշխատողների թվաքանակի և միջին աշխատավարձի
2011-2015թթ. դինամիկան**

		2011	2012	2013	2014	2015
1.	Հաստիքային աշխատողների միջին թվաքանակ, մարդ	123	126	122	112	115
2.	Միջին աշխատավարձ, դրամ	107800	103153	113675	117180	135211

1.3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում ՀՀ կառավարության մրցանակաբաշխություն

Մարտի 10-ին՝ Երևանում, Արմենիա Մարիոթ հյուրանոցի "Արարատ" սրահում տեղի է ունեցել արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մրցանակաբաշխության պաշտոնական արարողությունը:

Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության ամենամյա մրցանակաբաշխությունը կազմակերպվում և անց է կացվում յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի փետրվարի 26-ի N116 որոշմամբ սահմանված կարգով՝ արտադրանքի և ծառայությունների որակի բարձրացումը խթանելու, դրանց որակի կառավարման արդյունավետ մեթոդների ներդրմանն աջակցելու նպատակով: Մրցանակաբաշխությունն անց է կացվում նշված որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության կառավարության մրցանակաբաշխության հանձնաժողովի կողմից, որի նախագահը ՀՀ էկոնոմիկայի նախարարն է, իսկ քարտուղարը՝ Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրենը:

2014 թվականին անցկացված մրցանակաբաշխության արդյունքում ՀՀ կառավարության 19 փետրվարի 2015 թվականի N 143-Ա որոշմամբ սահմանվել են մրցանակների արժանացած կազմակերպությունները, դրանք են՝

- "Երևանի կոնյակի գործարան" ՓԲԸ
- "Սուրբ Գրիգոր Լուսավորիչ" բժշկական կենտրոն ՓԲԸ
- "Գյումրի գարեջուր" ՍՊԸ
- "Դիլիջան" հանքային ջրի գործարան ՍՊԸ
- "Մեդրու ՃՇՇՁ" ՍՊԸ
- "Դուստր Մարիաննա" ՍՊԸ

Միջոցառմանը նաև արժեվորվել է կազմակերպություններում որակի կառավարման համակարգի ներդրման գործընթացը և համապատասխան սերտիֆիկատներ են շնորհվել չորս կազմակերպությունների, որոնք ավարտել են համակարգի ներդրումը և սերտիֆիկացման գործընթացը: Դրանք են՝

- "Զվարթնոց միջազգային օդանավակայանների" ԱՎԼ ծառայություն
- "Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան" հիմնադրամ
- "Լոկատոր" ՓԲԸ
- "Ֆարմատեք" ՓԲԸ

Ստանդարտացման բնագավառում նշանակալի դերակատարման և ակտիվ մասնակցության համար առանձին մրցանակ է շնորհվել "Արարատ" սննդի կոմբինատ ՍՊԸ-ին:

2. ԻՍՕ Խորհրդի 97-րդ նիստը

ԻՍՕ Խորհուրդը պատասխանատու է Կազմակերպության կառավարման խնդիրների մեծամասնության համար: Խորհրդի նիստերը տեղի են ունենում տարեկան երկու անգամ: Այն բաղկացած է 20 անդամ մարմիններից: Խորհրդում անդամությունը բաց է բոլոր անդամ մարմինների համար, որոնք ռոտացիոն սկզբունքով փոփոխվում են՝ ապահովելով անդամների ներկայացվածությունը Խորհրդում:

Հայաստանն ի դեմս Ստանդարտների ազգային ինստիտուտի 2014 թվականի սեպտեմբերին Ռիո դե Ժանեյրոյում կայացած ԻՍՕ վեհաժողովի ժամանակ փակ գաղտնի քվեարկությամբ ընտրվեց ԻՍՕ Խորհրդի անդամ՝ երեք տարի ժամկետով:

2015 թվականի մարտի 16-18 Շվեյցարիայի Ժնև քաղաքում տեղի ունեցավ ԻՍՕ Խորհրդի հերթական 97-րդ նիստը, որին մասնակցեց Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն Ենոք Ազարյանը: ԻՍՕ Խորհուրդը քննարկեց կազմակերպության հետագա զարգացմանն առնչվող մի շարք առանցքային հարցեր, այդ թվում՝ ֆինանսական ռազմավարությունը, անցած տարվա ֆինանսական կատարողականը և ցուցանիշները, տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունները, քաղաքականության մշտական հանձնաժողովների աշխատանքի հաշվետվությունները և այլն:

Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն Ենոք Ազարյանը առանձին հանդիպումներ ունեցավ ՌԴ Ռոսստանդարտի պետ Ա.Աբրամովի, Գերմանիայի Ստանդարտների ազգային ինստիտուտի (DIN) տնօրեն Թորսթեն Բահկեի, ինչպես նաև ԻՍՕ գլխավոր քարտուղար պարոն Ռոբ Սթիվի հետ, որոնց ընթացքում քննարկվեցին համագործակցության և ստանդարտացման ոլորտի մի շարք հարցեր:

3. ԻՍՕ Զարգացող երկրների հարցերով քաղաքականության մշտական հանձնաժողովի (DEVCO) 23-րդ հանդիպումը

2015 թվականի մարտի 19-20 Շվեյցարիայի Ժնև քաղաքում, ԻՍՕ-ի գրասենյակում տեղի ունեցավ ԻՍՕ Զարգացող երկրների հարցերով քաղաքականության մշտական հանձնաժողովի (DEVCO) Խորհրդատվական խմբի 23-րդ նիստը: Նիստին մասնակցեց Խորհրդատվական խմբի անդամ Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ փոխտնօրեն Գ. Նազարյանը, ով այդ պաշտոնում վերընտրվել է 2014 թվականին՝ երկու տարի ժամկետով:

Խորհրդատվական խումբը (DEVCO CAG) բաղկացած է 11 անդամից՝ ութ անդամ զարգացող երկրներից և երեք անդամ զարգացած տնտեսությամբ երկրներից: Խորհրդատվական խմբի անդամներն ընտրվում են ելնելով անդամների անձնական մասնագիտական հատկանիշներից՝ DEVCO նախագահի կողմից՝ ԻՍՕ գլխավոր քարտուղարի հետ փոխհամաձայնությամբ: Խորհրդատվական խմբի անդամներն ընտրվում են երկու տարի ժամկետով՝ մեկ անգամ վերընտրվելու հնարավորությամբ: Խորհրդատվական խումբը հանդիպում է տարեկան երկու անգամ՝ մեկ անգամ մարտ ամսին, և երկրորդ անգամ՝ անմիջապես DEVCO համաժողովից հետո:

Խորհրդատվական խումբը քննարկեց DEVCO-ի կողմից 2014 թվականին իրականացված միջոցառումների վերաբերյալ հաշվետվությունը, մշակեց և

առաջարկություններ ներկայացրեց 2016-2020 թվականների DEVCO գործողությունների պլանի մշակման վերաբերյալ, ինչպես նաև քննարկեց DEVCO-ի ապագա կարգավիճակը և գործունեության ռազմավարությունը: Խորհրդատվական խումբը քննարկեց նաև ԻՍՕ Ակադեմիայի կարգավիճակը և նրա գործունեության հեռանկարները:

Նիստի ավարտին ԻՍՕ գլխավոր քարտուղար պարոն Ռոբ Սթիլը Խորհրդատվական խմբի համար անցակացրեց շրջայց ԻՍՕ-ի նոր գրասենյակով, որի ընթացքում անդամները ծանոթացան վերջին նորարարություններին:

4. Երևանում անցկացվեց երկաթուղային տրանսպորտի ոլորտում միջպետական ստանդարտացման տեխնիկական կոմիտեի նիստ

Երևանում, "Կոնգրես" հյուրանոցում 2015 թվականի մարտի 25-26 տեղի ունեցավ №524 "Երկաթուղային տրանսպորտ" ստանդարտացման Միջպետական տեխնիկական կոմիտեի (ՄՏԿ 524) հերթական նիստը: Նիստի շրջանակներում քննարկվեցին 2014թ. Ստանդարտացման աշխատանքների արդյունքները և 2015 թվականի ծրագիրը, երկաթուղային տրանսպորտի ապահովության հարցերը: Նիստը հայկական կողմից հյուրընկալում էր "Հարավկովկասյան երկաթուղի" ընկերությունը, որը նաև մասնակիցների համար հանդիպում կազմակերպեց Հայաստանի երկաթուղային ոլորտում աշխատող արտադրողների հետ:

Նիստի բացմանը պատվիրակներին ողջունեց "Հարավկովկասյան երկաթուղի" ՓԲԸ գլխավոր տնօրեն Վիկտոր Ռեբեցը՝ մաղթելով նրանց արդյունավետ աշխատանք: Ընկերության ղեկավարը ներկայացրեց նաև ՀԿԵ-ի գործունեությունը՝ ընդգծելով, որ երկաթուղին՝ երիտասարդ և դինամիկ զարգացող ընկերություն է, որը արդյունավետ համագործակցում է ինչպես ԱՊՀ երկրների երկաթուղային տրանսպորտի խորհրդի անդամ-երկրների հետ, այնպես էլ ՄՏԿ 524-ի մասնակիցների հետ:

Վիկտոր Ռեբեցը նշեց, որ ՀԿԵ աշխատանքին և ձեռքբերումներին պատվիրակները կծանոթանան երկաթուղային օբյեկտներ այցերի ժամանակ: Մասնավորապես, նախատեսվում է այցելել Երկաթուղային ենթակառուցվածքի ախտորոշման ճանապարհային կենտրոն, Ուսուցման ճանապարհային կենտրոն:

Նիստի մասնակիցներին ողջունել են նաև Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության Ստանդարտների ազգային ինստիտուտի փոխտնօրեն Գևորգ Նազարյանը և ՄՏԿ 524 նախագահի տեղակալ Սերգեյ Լյովինը:

Մասնավորապես, Գ.Նազարյանը կարևորեց երկաթուղային ոլորտում ստանդարտացման աշխատանքները, ընդգծելով, որ ստանդարտները թույլ են տալիս ներմուծել նոր տեխնոլոգիաներ, դյուրինացնում են գնումների գործընթացում պահանջների սահմանումը, ապահովում բարձր արդյունավետություն երկաթուղու կառավարման գործընթացներում և ընդհանրապես, թույլ են տալիս երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքը համապատասխանեցնել միջազգային լավագույն չափանիշներին:

ՄՏԿ 524-ը հանդիսանում է Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման հարցերով Միջպետական խորհրդի աշխատանքային կառույց: Այն ձևավորվել է 2010 թվականի նոյեմբերի 25-ին Միջպետական խորհրդի 38-րդ նիստի ընթացքում ընդունված որոշման համաձայն՝ երկաթուղային տրանսպորտի ոլորտում գործող միջպետական ստանդարտների, կանոնների մշակման, միջազգային չափանիշներին ներդաշնակեցման, միջազգային, տարածաշրջանային և ազգային չափանիշների կիրառման նպատակով:

Կոմիտեի անդամ են հանդիսանում Հայաստանը, Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը, Ռուսաստանը, Ուկրաինան, Ադրբեջանը: Դիտորդի կարգավիճակով կոմիտեի աշխատանքներին մասնակցում են Մոլդովան և Տաջիկստանը:

5. Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ գրանցվել է Եվրասիական տնտեսական միության միասնական ռեեստրում

Ստանդարտների ազգային ինստիտուտ փակ բաժնետիրական ընկերության արտադրանքի սերտիֆիկացման մարմինը և փորձարկման լաբորատորիաները գրանցվել են Եվրասիական տնտեսական միության սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների միասնական ռեեստրում:

6. ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ավստրալիայի Ստանդարտների Ինստիտուտի ազգային սեկտորի ղեկավար և Միջազգային էլեկտրատեխնիկական Կոմիտեում (ԻԷԿ) Ավստրալիայի ներկայացուցիչ պարոն Վարանթ Մեգերդիչյանը 2015 թվականի ապրիլի 21-ին այցելեց Ստանդարտների ազգային ինստիտուտ: Պարոն Մեգերդիչյանը ազգությամբ հայ է և Հայաստան էր ժամանել Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումներին մասնակցության նպատակով: Այդուհանդերձ, պարոն Մեգերդիչյանը հետաքրքրված էր նաև ՀՀ ստանդարտացման ներկայիս կարողություններով և Ավստրալիայի ու Հայաստանի ստանդարտացման ազգային մարմինների միջև հնարավոր համագործակցության հաստատմամբ:

Պարոն Մեգերդիչյանը հանդիպում ունեցավ Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն պարոն Ենոք Ազարյանի և փոխտնօրեն Գևորգ Նազարյանի հետ, որի ընթացքում համառոտ ներկայացվեցին ստանդարտացման ոլորտում ներկայումս իրականացվող հիմնական աշխատանքները և Ինստիտուտի դերը միջազգային ստանդարտացման ասպարեզում:

Պարոն Մեգերդիչյանն իր հերթին նկարագրեց Ավստրալիայի Ստանդարտների Ինստիտուտի աշխատանքները ու պատրաստակամություն հայտնեց աջակցել Հայաստանի Ստանդարտների ազգային ինստիտուտին առավել ակտիվ ներգրավվել ԻԷԿ-ի աշխատանքներին:

Պարոն Մեգերդիչյանն այցելեց նաև Ինստիտուտի Փորձարկման լաբորատորիա և տեղեկացավ լաբորատոր փորձարկման կարողություններին: Կողմերը պայմանավորվեցին հաճախակի հանդիպումներ ունենալ և փոխգործակցության եզրեր հաստատել երկու երկրների Ստանդարտացման ազգային մարմինների միջև:

8. Սեմինար "ՌԴ, ՀՀ և Կենտրոնական Ասիայի երկրների ստանդարտացման ոլորտի ներկայացուցիչների համար"

Ստանդարտների ազգային ինստիտուտի աշխատակիցները հունիսի 8-27 մասնակցեցին Չինաստանի Ժողովրդական Հանրապետության գիտության և տեխնիկայի նախարարության միջազգային համագործակցության դեպարտամենտի կողմից Չանչժոու քաղաքում կազմակերպված "Ռուսաստանի, Հայաստանի և Կենտրոնական Ասիայի երկրների ստանդարտացման ոլորտի ներկայացուցիչների համար" սեմինարին:

Սեմինարին մասնակցում են ստանդարտացման ոլորտի ներկայացուցիչներ Ռուսաստանից, Ղազախստանից, Ղրղզստանից, Ուզբեկիստանից և Մոնղոլիայից: Սեմինարը վարում էին Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ստանդարտացման վարչության աշխատակիցները, ինչպես նաև այլ մասնագետներ Չինաստանի արդյունաբերական կազմակերպություններից: Քննարկվեցին գյուղատնտեսության և տուրիզմի ոլորտներում մի շարք կարևոր հարցեր, նշված ոլորտներում բարեփոխումների և հետագա համագործակցության վերաբերյալ:

Սեմինարի փակման խոսքով հանդես եկավ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ստանդարտացման վարչության տնօրեն Լի Յուբինգը: Մասնակիցներին հանձնվեցին համապատասխան սերտիֆիկատներ:

9. TR TC 014/2011 "Ավտոճանապարհների անվտանգություն" ՏԿ ապահովող ստանդարտների ցանկի արդիականացում

Եվրասիական Տնտեսական Հանձնաժողովում ս.թ. հունիսի 23-24 քննարկվեց Մաքսային Միության "Ավտոճանապարհների անվտանգություն" TR TC 014/2011 տեխնիկական կանոնակարգն ապահովող ստանդարտների ցանկի արդիականացումը: Ելնելով տեխնիկական կանոնակարգի կիրառման փորձից անհրաժեշտություն է առաջացել ստանդարտների ցանկը համալրել մի շարք նոր, ինչպես նաև նախկինում չներառված գործող միջապետական և ազգային ստանդարտներով: Հայաստանի Հանրապետության շահերը քննարկմանը ներկայացնում էր Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ տնօրեն Ենոք Ազարյանը:

10. Ռիզայում կայացավ Եվրոպական Ստանդարտացման Կոմիտեի (CEN) 43-րդ վեհաժողովը

Ստանդարտների ազգային ինստիտուտի պատվիրակությունը՝ տնօրեն Ե.Ազարյանի գլխավորությամբ Լատվիայի մայրաքաղաք Ռիզայում մասնակցել է ՍԵՆ-ի 43-րդ վեհաժողովին և Եվրոպական ստանդարտացման 4-րդ սամիթին: Սամիթը տեղի ունեցավ Լատվիայի Ազգային գրադարանում, որին մասնակցում էին Եվրոպական ստանդարտացման ազգային մարմինների ներկայացուցիչները, ինչպես նաև հրավիրված բազմաթիվ միջազգային և Եվրոպական կազմակերպություններ: Ինչպես ստանդարտացումը կարող է օգնել կառուցել խելացի և կանաչ տնտեսություն՝ սա էր սամիթի քննարկման թեման: Այն առավելապես կողմնորոշված էր շինարարության ոլորտին:

11. Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ԻՍՕ) 38-րդ վեհաժողովը, Սեուլ, Հարավային Կորեա

Ստանդարտների ազգային ինստիտուտի պատվիրակությունը՝ տնօրեն Ե.Ազարյանի գլխավորությամբ 2015 թվականի սեպտեմբերի 14-18 մասնակցեց Հարավային Կորեայի մայրաքաղաք Սեուլում տեղի ունեցած ԻՍՕ-ի (Ստանդարտացման Միջազգային Կազմակերպության) 38-րդ վեհաժողովին:

1994 թվականից Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է ԻՍՕ-ի թղթակից, իսկ 1997 թվականից լիիրավ անդամ: Ստանդարտների ազգային ինստիտուտը ներկայումս մասնակցում է 65 տեխնիկական հանձնաժողովների և 3 քաղաքականության մշակման

մշտական հանձնաժողովների՝ ԿԱՍԿՕ, ԴԵՎԿՕ և ԿՕՊՕԼԿՕ աշխատանքներին: 2014 թվականին Ստանդարտների ազգային ինստիտուտը ԻՍՕ-ի վեհաժողովի կողմից փակ գաղտնի քվեարկությամբ ընտրվել է ԻՍՕ Խորհրդի անդամ՝ 2015-2017 թվականների ժամկահատվածի համար:

Միջազգային ստանդարտացման կազմակերպությունը (ԻՍՕ), որի անդամակցությունը կազմված է 164 երկրների ստանդարտների ազգային ինստիտուտներից, կամավոր, փոխհամաձայնության վրա հիմնված միջազգային ստանդարտների համաշխարհային ամենախոշոր մշակողն է, որը ներկայումս ունի ձեռնարկատիրությանն, կառավարությանն ու հասարակությանն ուղղված ավելի քան 19500 ստանդարտներ:

Սեպտեմբերի 14-ին տնօրեն Ե.Ազարյանը և փոխտնօրեն Գ.Նազարյանը մասնակցեցին ԻՍՕ Խորհրդի 98-րդ նիստին, որի ընթացքում քննարկվեցին ԻՍՕ քարտուղարության տարեկան քյուզեն, ԻՍՕ-ի տարածաշրջանային ռազմավարության մշակման խնդիրները, ԻՍՕ-ի նոր գլխավոր քարտուղարի ընտրության հետ կապված հարցերը և այլ ռազմավարական խնդիրներ:

ԻՍՕ 38-րդ վեհաժողովի կարգախոսն էր՝ «Մեծ իրադարձություններ են տեղի ունենում, երբ աշխարհը գալիս է փոխհամաձայնության» (Great things happen, when the world agrees): Այդ կարգախոսն ընդգծում է միջազգային ստանդարտների դերը՝ որպես փոխհամաձայնության գալու ձևաչափ, ինչպես նաև դրանց դրական ու օգտակար ազդեցությունները համաշխարհային մակարդակով: Վեհաժողովի ընթացքում կազմակերպվեցին նաև խմբային քննարկումներ, որոնց նպատակն էր տեղեկացնել ստանդարտացման ոլորտի համաշխարհային նոր զարգացումներին (օրինակ՝ նոր ԻՍՕ 9001 և ԻՍՕ 14001 ստանդարտների հրապարակումը), ինչպես նաև լուսաբանել ստանդարտացման տնտեսական օգուտները և ազդեցությունները՝ առանձին երկրների օրինակով:

ԻՍՕ-ի 38-րդ վեհաժողովի ընթացքում ներկայացվեցին և հաստատվեցին ԻՍՕ ֆինանսա-տնտեսական գործունեության արդյունքները, զեկույցով հանդես եկան ԻՍՕ գլխավոր քարտուղարի պաշտոնակատարը, ԻՍՕ նախագահը, ԻՍՕ քաղաքականության, ֆինանսական և տեխնիկական կառավարման գծով փոխնախագահները և ԻՍՕ գանձապահը: Ընդհանուր առմամբ, ԻՍՕ 38-րդ վեհաժողովն անցկացվեց բարձր արդյունավետությամբ և արձանագրեց մի շարք էական ձեռքբերումներ, որոնք հետագայում էլ ավելի կբարձրացնեն ԻՍՕ միջազգային դերը և կնպաստեն ստանդարտացման համաշխարհային գործընթացների արդյունավետության աճին:

12. ԻՍՕ-ի Զարգացող երկրների հարցերով մշտական կոմիտեի (ԴԵՎԿՕ) 49-րդ նիստը. Սեուլ, Հարավային Կորեա

Ստանդարտների ազգային ինստիտուտի պատվիրակությունը՝ տնօրեն Ե.Ազարյանի գլխավորությամբ 2015 թվականի սեպտեմբերի 15-16 մասնակցեց Հարավային Կորեայի մայրաքաղաք Սեուլում տեղի ունեցած ԻՍՕ-ի Զարգացող երկրների հարցերով մշտական կոմիտեի (ԴԵՎԿՕ) 49-րդ պլենար նիստին:

Նիստը իր բնույթով աշխույժ քննարկումների ոճով էր և տեղի ունեցան մի քանի խմբային ու միջանկյալ քննարկումներ (breakout sessions), որոնք նվիրված էին 2016-2020 թվականների Զարգացող երկրներին առնչվող ռազմավարական գործողությունների նոր ծրագրի ձևավորմանը:

Նիստին առանձին ելույթով հանդես եկավ ԻՍՕ գլխավոր քարտուղարի պաշտոնակատար պարոն Քեվին Մաքքինլին, որի զեկույցը նվիրված էր միջազգային ստանդարտացման գործընթացում զարգացող երկրների դերակատարման բարձրացմանը և միջազգային ստանդարտացման աշխատանքներում զարգացող երկրներից շահագրգիռ կողմերի առավել ակտիվ մասնակցությանը:

ԴԵՎԿՕ 49-րդ պլենար նիստին հաջորդեցին չորս զուգահեռ խմբային քննարկումներ, իսկ ավելի ուշ այդ քննարկումների արդյունքներն ամփոփվեցին ընդհանուր պլենար նիստում: Խմբային քննարկումների նպատակն էր բացահայտել բոլոր շահագրգիռ կողմերի՝ զարգացող երկրների ներկայացուցիչների կարծիքները և առաջարկությունները 2016-2020 թվականների Ջարգացող երկրներին առնչվող ռազմավարական գործողությունների նոր ծրագրի նախագծի վերաբերյալ:

Խմբային քննարկումներից մեկը վարեց Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ փոխտնօրեն, ԴԵՎԿՕ Խորհրդի անդամ Գ.Նազարյանը: Ներկայացված առաջարկները հետագայում կամփոփվեն ԻՍՕ քարտուղարության կողմից և կձառայեն նախագծի լրամշակման համար:

Սեպտեմբերի 16-ին Ստանդարտների ազգային ինստիտուտի փոխտնօրեն Գ.Նազարյանը, որպես ԴԵՎԿՕ նախագահության խորհրդատվական խմբի անդամ (ՆԽԽ), մասնակցեց ԴԵՎԿՕ ՆԽԽ նիստին, որտեղ ամփոփվեցին պլենար նիստի ընթացքում ընդունված որոշումները և հստակեցվեցին հետագա ռազմավարական ուղղությունները և անելիքները:

13. Միջազգային համագործակցության ոլորտում նոր ձեռքբերումները, Սեուլ, Հարավային Կորեա

ԻՍՕ-ի վեհաժողովներին ներկայացված լինելը, բացի տեխնիկական բնույթի խնդիրների քննարկումից, համագործակցության վերաբերյալ համաձայնագրերի և ճանաչման ձեռք բերման լավագույն հնարավորություններից է: ԻՍՕ-ի անդամները մեծամասամբ բաց չեն թողնում այս հնարավորությունը որպեսզի շփվեն միմյանց հետ, ձեռք բերեն նոր պայմանավորվածություններ և հիմք դնեն համագործակցության նոր ձևերին:

Ստանդարտների ազգային ինստիտուտի պատվիրակությունը 2015 թվականի սեպտեմբերի 14-18 մասնակցելով Հարավային Կորեայի մայրաքաղաք Սեուլում տեղի ունեցած ԻՍՕ-ի 38-րդ վեհաժողովին, առանձնակի հանդիպումներ ունեցավ ԻՍՕ-ի նախագահ պարոն Ժանգ Քսիաոգանգի, ԻՍՕ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար պրոն Քեվին Մքքինլիի, Չինաստանի Ստանդարտացման Ադմինիստրացիայի (SAC) ղեկավար պարոն Թիան Շիհոնգի, ԱՄՆ-ի Ամերիկայի ազգային ստանդարտների ինստիտուտի (ANSI) նախագահ և տնօրեն պարոն Ջոն Բիաթիայի, Գերմանիայի Ստանդարտացման ինստիտուտի (DIN) տնօրեն Թորստեն Բահկեի և փոխտնօրեն Ռուդիգեր Մարգարթի, Ռուսաստանի Դաշնության Ռոսստանդարտի ղեկավար պարոն Ալեքսեյ Աբրամովի, ինչպես նաև Ֆրանսիայի, Ավստրիայի, Իսպանիայի, Մեծ Բրիտանիայի, Կանադայի, Լեհաստանի, Լիտվայի, Բելարուսի, Ուկրաինայի, Ղազախստանի և մի շարք այլ երկրների պատվիրակությունների հետ: Այդ առանձնազրույցների և քննարկումների արդյունքում, մասնավորապես, տեղի ունեցավ փորձի փոխանակում և քննարկվեցին երկուստեք համագործակցության հնարավորությունները:

Հայաստանի պատվիրակությունը բանակցությունների արդյունքում մասնավորապես պայմանավորվածություններ ձեռք բերեց ԱՄՆ-ի և Չինաստանի հետ ստանդարտացման և առևտրի խոչընդոտների վերացման ոլորտում համագործակցության համաձայնագրերի կնքման համար: Առաջարկություն ստացվեց նաև DIN-ի պատվիրակության ղեկավարներից առաջիկայում հյուրընկալել ՍԱՐՄ-ի պատվիրակությանը Բեռլինում՝ փորձի փոխանակման և համագործակցության խնդիրների քննարկման նպատակով:

Հայկական պատվիրակության գործուն աջակցության շնորհիվ, հաջողվեց օժանդակել ՌԴ ներկայացուցչի ընտրությունը ԻՍՕ Տեխնիկական կառավարման խորհրդում: ՌԴ պատվիրակությունն իր շնորհակալությունն հայտնեց Հայաստանի աջակցության համար:

Ընդհանուր առմամբ, Ստանդարտների ազգային ինստիտուտը ներկայումս չափազանց բարձր վարկանիշ ու հեղինակություն ունի միջազգային ստանդարտացման ասպարեզում և խորացնում է իր համագործակցությունը տարբեր երկրների հետ:

14. Միջազգային էլեկտրատեխնիկական Կոմիտեի (ԻԷԿ) վեհաժողովը Մինսկում

Մինսկ, Բելառուս 2015-10-12 - Համաշխարհային տեխնոլոգիական զարգացման ոլորտի շուրջ 1200 առաջնորդներ և փորձագետներ աշխարհի ավելի քան 100 երկրներից 2015 թվականի հոկտեմբերի 12-16 այցելեցին Մինսկ, Բելառուս՝ ԻԷԿ-ի 79-րդ վեհաժողովին մասնակցելու համար: Վեհաժողովի ընթացքում քննարկվեցին էներգետիկ արդյունավետության բարելավմանն ուղղված գործնական առաջադրանքները և համաշխարհային առևտրում ավելի շատ երկրների, այդ թվում՝ զարգացող երկրների ներգրավման խնդիրները: Նիստը հյուրընկալվեց Բելառուսի ԻԷԿ ազգային կոմիտեի, ԲԵԼԼԻՍ-ի ("Կենցաղային և արդյունաբերական արտադրանքի փորձարկում և սերտիֆիկացում" ԲԲԸ), որը վարում է այդ կոմիտեի քարտուղարությունը և ԲԵԼՍՍ-ի (Բելառուսի Ստանդարտացման Պետական Կոմիտեի) կողմից: Նիստին մասնակցեց նաև Հայաստանի պատվիրակությունը՝ Ստանդարտների ազգային ինստիտուտի փոխտնօրեն Գևորգ Նազարյան (պատվիրակության ղեկավար) և ՀՀ էկոնոմիկայի նախարարության Ստանդարտացման և չափագիտության բաժնի պետ Անի Օբոսյան կազմով:

Վեհաժողովի գլխավոր թեման համաշխարհային էներգետիկ արդյունավետությունն էր: Էներգիայի պահանջը աստիճանաբար աճում է՝ մինչև 2040 թվականը զարգացող երկրները կօգտագործեն զարգացած երկրների կողմից ներկայումս օգտագործվող էլեկտրաէներգիայի կրկնակին (ՏՀԶԿ տվյալներով): Համաշխարհային մակարդակով էներգիայի արտադրությունը ավելի դանդաղ է աճում, քան սպառումը: Զարգացած և զարգացող երկրների կայուն էներգիայի աճող պահանջարկը բավարարելու նպատակով, էլ.էներգիան պետք է օգտագործվի առավել խելամտորեն՝ քիչ էներգիայով ավելին անելու համար: Էներգետիկ արդյունավետությանն ուղղված ստանդարտներն օգնում են արձագանքել այդ մարտահրավերին:

Ինչպես նշեց ԻԷԿ-ի նախագահ դոկտոր Ջունջի Նոմուրան. "Էներգետիկ արդյունավետությունը պետք է դիտարկվի համակարգային մոտեցմամբ: Եթե շենքում մեկ բնակարան կամ գրասենյակ բարելավում է էներգետիկ արդյունավետությունը, խնայողությունները չնչին կլինեն: Միայն եթե ողջ շենքը դիտարկի արդյունավետության խնդիրը՝ փոփոխություններն էական կլինեն:"

Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է ԻԷԿ-ին 2001 թվականից՝ գործընկեր երկրի կարգավիճակով: Գործընկերության ձևաչափը թույլ է տալիս երկրին անվճար ձեռք բերել ԻԷԿ-ից ցանկացած 200 ստանդարտ, առանց վաճառքի իրավունքի՝ ազգային ստանդարտների մշակման նպատակով: Ընդ որում, 50 ստանդարտ որպես ազգային ընդունելու և ազգային էլեկտրատեխնիկական կոմիտե ձևավորելու դեպքում երկիրն իրավունք է ստանում ձեռք բերել "Գործընկեր Պլյուս" կարգավիճակ, որի դեպքում ստանում է ԻԷԿ-ի աջակցության ծրագրերից օգուվելու և ևս 200 անվճար ստանդարտ ձեռք բերելու իրավունք:

Հայկական պատվիրակությունը հոկտեմբերի 12-ին առանձին հանդիպում ունեցավ ԻԷԿ-ի գործընկեր երկրների քարտուղար տիկին Ֆրանսուազա Ռաուզերի հետ, որի ընթացքում քննարկվեցին ԻԷԿ-ի ստանդարտացման աշխատանքներում Հայաստանի առավել ակտիվ ներգրավման խնդիրները և կարգավիճակը փոխելու հնարավորությունները:

Հոկտեմբերի 13-ին Հայկական պատվիրակությունը մասնակցեց գործընկեր երկրների ֆորումին, որտեղ քննարկվեցին ստանդարտացման աշխատանքներում զարգացող երկրների ակտիվ ներգրավման խնդիրները և մի շարք երկրների հաջողված փորձի օրինակները:

Հայկական պատվիրակությունը մասնակցեց նաև "Էներգետիկ արդյունավետությունը արդյունաբերությունում", "ԻԷԿ-ի գործունեության հեռանկարային ուղղությունները", "ԻԷԿ-ի համապատասխանության գնահատման համակարգերը" և "Կիրեռ անվտանգությունը էլեկտրատեխնոլոգիական ենթակառուցվածքում" թեմաներով աշխատաժողովներին, իսկ հոկտեմբերի 16-ին՝ ԻԷԿ Խորհրդի վեհաժողովին: Վեհաժողովից և աշխատաժողովներից դուրս հայկական պատվիրակության անդամները առանձնազրույցներ և քննարկումներ ունեցան այլ երկրների ներկայացուցիչների հետ:

15. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՀԵՏ

Չինաստանի Ստանդարտացման ազգային մարմնի (SAC) հրավերով 2015 թվականի նոյեմբերի 5-6-ին Ստանդարտների ազգային ինստիտուտի (SARM) պատվիրակությունը՝ փոխտնօրեն Գ.Նազարյան (պատվիրակության ղեկավար), Տարածքային ստորաբաժանումների գործունեությունը համակարգող ծառայության պետ Է.Ազարյան և իրավաբան Յու.Խաչատրյան կազմով մասնակցեց Չինաստանի Սիան քաղաքում կազմակերպված "Ստանդարտները հարթում են Մետաքսյա Ճանապարհը" թեմայով աշխատաժողովին: Աշխատաժողովին մասնակցում էին նաև Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Մոնղոլիայի և Սինգապուրում ԻՍՕ տարածաշրջանային գրասենյակի պատվիրակությունները:

Նոյեմբերի 5-ին SARM-ի պատվիրակությունը մասնակցեց Յանգինգ քաղաքում կազմակերպված Գյուղատնտեսական բարձր տեխնոլոգիաների ցուցահանդեսին, որտեղ առանձին տաղավարով ներկայացված էին գյուղատնտեսական ոլորտի ստանդարտացման ձեռքբերումները: Օրվա երկրորդ կեսին SARM-ի պատվիրակությունը երկկողմանի հանդիպում-քննարկում ունեցավ SAC-ի գլխավոր տնօրենի տեղակալ տիկին Յու Սինլիի, Միջազգային համագործակցության փոխտնօրեն Քուու Չանգսինգի և Գյուղատնտեսական ստանդարտացման վարչության պետ Ֆան Չունմեի հետ, որի ընթացքում քննարկվեցին Չինաստանի և Հայաստանի ստանդարտացման համակարգերի առանձնահատկությունները և ազգային մարմինների միջև համագործակցության սկզբունքները ու հեռանկարները:

Նոյեմբերի 6-ին SARM-ի փոխտնօրեն Գ.Նազարյանը և SAC-ի գլխավոր տնօրեն Թիան Շիհոնգը պաշտոնապես հանդիսավոր արարողությամբ նախաստորագրեցին երկու կազմակերպությունների միջև համագործակցության վերաբերյալ համաձայնագիր: Այնուհետև, SARM-ի պատվիրակությունը մասնակցեց "Ստանդարտները հարթում են Մետաքսյա Ճանապարհը" թեմայով աշխատաժողովին, որի ընթացքում փոխտնօրեն Գ.Նազարյանը հանդես եկավ ստանդարտացման ոլորտում հայ-չինական համագործակցությանը նվիրված առանձին ելույթով:

Ստորագրված համաձայնագիրը լուրջ ձեռքբերում է միջազգային համագործակցության ոլորտում և հնարավորություն կընձեռի հայ-չինական համատեղ տնտեսական ծրագրերում օժանդակություն ցուցաբերել հայկական ու չինական ընկերություններին՝ նրանց տրամադրելով միասնական ստանդարտներ:

2. ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

2.1. ԱՉԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում Ստանդարտների ազգային ինստիտուտը հետևողականորեն իրականացրել է ՀՀ կառավարության որոշումներով և ՍԱԻ տնօրենի 03.05.2013թ. թիվ 16-Վ հրամանով հաստատված «Ազգային ստանդարտների մշակման 2013-2015 թվականների միջնաժամկետ ծրագրով» նախատեսված ստանդարտների մշակման աշխատանքները:

Ինստիտուտը ստանդարտացման աշխատանքներն իրականացրել է ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների հետ համատեղ: Մշակման գործընթացում մասնակցել են համապատասխան ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները՝ միաժամանակ գնահատելով ՀՀ-ում միջազգային (ԻՍՕ) և եվրոպական (ԵՆ) ստանդարտների կիրառման նպատակահարմարությունը՝ ազգային ստանդարտների կարգավիճակով: Ազգային ստանդարտները մշակվել են վերահրատարակման և հավանության եղանակներով:

2015թ. Ստանդարտների ազգային ինստիտուտի առաջնահերթ խնդիրներից է Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերի պահանջներն ապահովող ստանդարտների ներդաշնակեցման աշխատանքների իրականացումը: Ընդ որում, հաշվի առնելով Եվրասիական Տնտեսական Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությունը, այդ թվում՝ իրականացվելիք միջոցառումների ճանապարհային քարտեզի համաձայն նախատեսվում է ՀՀ տեխնիկական կանոնակարգերի ներդաշնակեցումը Մաքսային Միության տեխնիկական կանոնակարգերի և Եվրամիության դիրեկտիվների պահանջների հետ:

Ելնելով վերոնշյալից, ՀՀ էկոնոմիկայի նախարարության հանձնարարությամբ Ստանդարտների ազգային ինստիտուտը հաշվետու ժամանակաշրջանում վերլուծության է ենթարկել Մաքսային միության թվով 35 տեխնիկական կանոնակարգերի պահանջների կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկերը՝ ՀՀ-ում դրանց ներդրումն ապահովելու նպատակով: Իրականացվել են վերլուծական աշխատանքներ՝ որոշելու համար վերոնշյալ տեխնիկական կանոնակարգերից յուրաքանչյուրի պահանջների կիրառումն ապահովող ստանդարտների կարգավիճակը ՀՀ-ում: Այդ աշխատանքների կատարման արդյունքում պարզվել է, որ ՀՀ-ում ազգային ստանդարտի կարգավիճակով գործարկման և ներդրման են ենթակա շուրջ 2700 միջպետական և Ռուսաստանի Դաշնության ստանդարտներ՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներն ապահովելու համար:

Ի կատարումն ՀՀ կառավարության 2015 թվականի մայիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքի բարեփոխման 2015 թվականի ծրագիրը և որակի ենթակառուցվածքի բարեփոխման 2015 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N 548-Ա որոշման «Պետական աջակցություն «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2015 թվականի ստանդարտացման ոլորտում ծրագրերի կատարման գծով» ծրագրի և համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՍԱԻ միջև 2015 թվականի հուլիսի 1-ին կնքված N 88-15 պայմանագրի՝ ինստիտուտը հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել է հետևյալ միջոցառումները (աշխատանքները)՝

- 1) *Եվրասիական տնտեսական միության տարածքում գործող տեխնիկական կանոնակարգերի պահանջներն ապահովող ստանդարտների փորձաքննություն և ՀՀ-ում դրանց գործարկման ապահովում,*
- 2) *ԵՏՄ տեխնիկական կանոնակարգման և ստանդարտացման բնագավառի կոմիտեների և ենթակոմիտեների նիստերին մասնակցություն,*
- 3) *Ստանդարտների ազգային ինստիտուտի ՀԳՄ-րի գործունեության հաշվառման էլեկտրոնային բազայի ծրագրի մշակում և ներդրում,*
- 4) *Լաբորատոր կարողությունների զարգացում՝ լաբորատոր սարքերի համալրող արագամաշ սարքավորումների և փորձարկման ստանդարտ նմուշների ձեռք բերում:*

ԵՏՄ-ի տեխնիկական կանոնակարգերի պահանջներն ապահովող ստանդարտների ցանկերի փորձաքննության հիման վրա Ստանդարտների ազգային ինստիտուտը կազմակերպել է արդիականացված ստանդարտների ցանկերի քննարկումը համապատասխան ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովներում: Քննարկման արդյունքում հաստատվել և գործողության մեջ են դրվել ԵՏՄ թվով 28 տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարումն ապահովող թվով 1187 միջպետական (ԳՕՍՏ) և ՌԴ ստանդարտներ: Գործողության մեջ դրված այդ ստանդարտները հիմնականում ներդաշնակեցված են միջազգային և եվրոպական ստանդարտների հետ:

Ստանդարտների ներդաշնակեցման աշխատանքներ չեն կատարվել հետևյալ կանոնակարգերի ուղղությամբ.

1. TP TC 022/2011 «Սննդամթերք մակնշման մասով» (կանոնակարգի պահանջների կատարումն ապահովող ստանդարտների ցանկը բացակայում է),
2. TP TC 026/2011 «Փոքրաչափ նավերի անվտանգության մասին» (վերոնշյալ ոլորտը ՀՀ-ում բացակայում է),
3. TP TC 031/2011 «Գյուղատնտեսական և անտառտնտեսության տրակտորների և դրանց կցանքների անվտանգության մասին» (կանոնակարգի պահանջների կատարումն ապահովող ստանդարտների ցանկը բացակայում է):

2015թ. ՍԱԻ-ն իրականացրել է ԵՏՄ-ի տարածքում գործող հետևյալ տեխնիկական կանոնակարգերի պահանջներն ապահովող ստանդարտների ցանկերի փորձաքննություն.

1. TP TC 001/2011 «Երկաթուղային շարժական կազմի անվտանգություն»,
2. TP TC 002/2011 «Բարձր արագության երկաթուղային տրանսպորտի անվտանգություն»,
3. TP TC 003/2011 «Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի անվտանգություն»,
4. TP TC 004/2011 «Ցածր լարման սարքավորումների անվտանգության մասին»,
5. TP TC 005/2011 «Փաթեթվածքի անվտանգություն»,
6. TP TC 006/2011 «Հրատեխնիկական արտադրանքի անվտանգություն»,
7. TP TC 007/2011 «Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանքի անվտանգություն»,
8. TP TC 008/2011 «Խաղալիքների անվտանգություն»,
9. TP TC 009/2011 «Օձանեղիքակոսմետիկական արտադրանքի անվտանգություն»,
10. TP TC 010/2011 «Մեքենաների և սարքավորումների անվտանգություն»,
11. TP TC 011/2011 «Լիֆտերի անվտանգություն»,

12. TP TC 012/2011 «Պայթյունավտանգ միջավայրերում աշխատող սարքավորումների անվտանգություն»,
13. TP TC 013/2011 «Ավտոմոբիլային և ավիացիոն բենզիններին, դիզելային և նավի վառելիքներին, ռեակտիվ շարժիչների վառելիքներին և մազութին ներկայացվող պահանջների մասին»,
14. TP TC 014/2011 «Ավտոճանապարհների անվտանգություն»,
15. TP TC 015/2011 «Հացահատիկի անվտանգություն»,
16. TP TC 016/2011 «Գազային վառելիքով աշխատող սարքերի անվտանգություն»,
17. TP TC 017/2011 «Թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգություն»,
18. TP TC 018/2011 «Անիվային տրանսպորտային միջոցների անվտանգության մասին»,
19. TP TC 019/2011 «Անհատական պաշտպանության միջոցների անվտանգություն»,
20. TP TC 020/2011 «Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիության»,
21. TP TC 021/2014 «Սննդամթերքի անվտանգության մասին»,
22. TP TC 023/2012 «Մրգերից և բանջարեղեններից պատրաստված հյութամթերքների անվտանգություն»,
23. TP TC 024/2011 «Ճարպայուղային մթերք»,
24. TP TC 025/2012 «Կահույքի անվտանգություն»,
25. TP TC 027/2012 «Հատուկ սննդամթերքի որոշակի տեսակների, այդ թվում դիետիկ բուժիչ և դիետիկ կանխարգելիչ մթերքի անվտանգության մասին»,
26. TP TC 028/2012 «Պայթուցիկ նյութերի և դրանց հիմքով արտադրանքի անվտանգություն»,
27. TP TC 029/2012 «Սննդային հավելումների, բուրավետիչների և տեխնիկական օժանդակ միջոցների անվտանգության պահանջներ»,
28. TP TC 030/2012 «Քսուքային նյութերի, յուղերի և հատուկ հեղուկների պահանջներ»,
29. TP TC 032/2013 «Ավելցուկային ճնշմամբ աշխատող սարքավորումների անվտանգություն»,
30. TP TC 033/2013 «Կաթի և կաթնամթերքի անվտանգություն»,
31. TP TC 034/2013 «Մսի և մսամթերքի անվտանգություն»:

ԵՏՄ տեխնիկական կանոնակարգերի պահանջներն ապահովող ստանդարտների փորձաքննության արդյունքում նախապատրաստվել են առաջարկություններ՝ ստանդարտների ցանկերում միջազգային, միջպետական ստանդարտների ներառման վերաբերյալ: Այդ հարցը քննարկվել և գնահատվել է ստանդարտացման, չափագիտության, հավատարմագրման ոլորտի մասնագետներից կազմված աշխատանքային խմբի կողմից՝ համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամանի (հրաման N 268-Ա առ 23.02.2015թ.) (արձանագրություն N1 առ 06.03.2015թ., արձանագրություն N2 առ 17.04.2015թ. և արձանագրություն N3 առ 26.06.2015թ.):

Ի կատարումն ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի «Ստանդարտների մշակման ծառայությունների 2015 թվականի ծրագիրը և ստանդարտացման 2015 թվականի աշխատանքների ցանկը հաստատելու մասին» N 614-Ա որոշման և դրա հիման վրա 2015 թվականի հուլիսի 22-ին ՀՀ էկոնոմիկային նախարարության և ՍԱԻ միջև կնքված N102-15 պայմանագրի, ինչպես նաև 2015 թվականի նոյեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության

կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի N 614-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» N 1397-Ա որոշման՝ հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են միջազգային (ԻՍՕ) և Եվրոպական (ԵՆ) ստանդարտներին ներդաշնակ թվով 56 ազգային ստանդարտների նախագծերի մշակման աշխատանքներ:

Մշակվել են ազգային ստանդարտներ ՀՀ տնտեսության գերակայող հետևյալ ճյուղերում՝ ռազմաարդյունաբերության, շինարարության, բնապահպանության, սննդամթերքի և գյուղատնտեսական մթերքի արտադրության, էներգախնայողության և էներգաարդյունավետության, առողջապահության, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ և այլն:

Բացի դրանից, հաշվետու ժամանակաշրջանում ՍԱԻ-ը ՏՀ 8 «Ջրի որակ» ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի հետ համատեղ 2015 թվականի 1-ին կիսամյակում ՀՀ տարածքում հավանության մեթոդով ազգային ստանդարտի կարգավիճակով ընդունել և գործողության մեջ է դրել թվով 69 եվրոպական ստանդարտներին ներդաշնակ ազգային ստանդարտներ: Ստանդարտների մշակումը հավանության մեթոդով իրականացվել է՝ ի կատարումն ՍԵՆ ՏԿ 164 «Ջրամատակարարում» ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովին անդամակցության հետ կապված պարտավորությունների:

2.2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ստանդարտների ազգային ինստիտուտը հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպել է ՀՀ ընկերությունների մասնակցությունը ԻՍՕ-ի 46 ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի և 18 ենթահանձնաժողովի աշխատանքներին:

Կազմակերպվել են միջազգային ստանդարտների նախագծերի էլեկտրոնային քվեարկության աշխատանքներ, որի ընթացքում 197 միջազգային ստանդարտների նախագծեր անցել են փորձաքննություն և համաձայնեցվել են ՀՀ-ում բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ:

ՍԱԻ կողմից իրականացվել են աշխատանքներ միջազգային ստանդարտացման կազմակերպության և նրա հանձնաժողովների հետ, ինչպես նաև ստանդարտացման եվրոպական կոմիտեի և նրա հանձնաժողովների հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում տեխնիկական հանձնաժողովներին ստանդարտացման աշխատանքների իրականացման նպատակով տրամադրվել են շուրջ 104 եվրոպական ստանդարտ:

Իրականացվել են հետևյալ միջպետական ստանդարտացման աշխատանքները՝

1. կազմակերպել և կատարել է շուրջ 1157 միջպետական ստանդարտների նախագծերի էլեկտրոնային քվեարկություն,

2. կատարել է ԱՊՀ երկրների Միջպետական ստանդարտացման խորհրդի (ՄՍԽ) շուրջ 45 հանձնարարականներ,

3. կազմակերպել է շուրջ 522 միջպետական ստանդարտների նախագծերի համաձայնեցում 66 ՀՀ շահագրգիռ կազմակերպությունների հետ,

Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման ծրագրի նպատակն է ունենալ միջազգային, եվրոպական, միջպետական և այլ պետությունների, ինչպես նաև ազգային ստանդարտների արդիականացված ֆոնդ և պատշաճ և հավաստի

տեղեկատվություն տրամադրել ձեռներեցներին, բիզնեսի ներկայացուցիչներին և պետական կառավարման մարմիններին գործող ստանդարտների վերաբերյալ:

2.3. ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

2015 թվականին Ստանդարտների ազգային ֆոնդը համալրվել է 1614 միջազգային (ԻՍՕ), 1136 Եվրոպական (ԵՆ), 1386 միջպետական (ԳՕՍՏ), 1081 Ռուսաստանի Դաշնության (ԳՕՍՏ Ռ) և 56 Հայաստանի Հանրապետության (ՀՍ) նոր ստանդարտներով:

Ստանդարտների ազգային ինստիտուտն իրականացրել է նաև ՀՀ-ում ընդունված և գործող ստանդարտների էլեկտրոնային տարբերակների ստեղծման և կայքում տեղադրման աշխատանքներ՝ ստանդարտների էլեկտրոնային վճարման համակարգի ներդրման նպատակով:

Հաշվետու ժամանաշրջանում Հայաստանի Հանրապետության գործատուներին և մասնագետներին սպառիչ տեղեկատվություն ապահովելու համար հրատարակվել է «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» թվով 3 տեղեկատուներ և պատրաստվել է ՀՀ կազմակերպությունների համար 12 տեղեկատվական թերթիկ՝ ազգային ֆոնդում համալրված բոլոր ստանդարտների վերաբերյալ, որոնք տրամադրվել են Ինստիտուտի բոլոր բաժանորդներին:

2015թ. Ինստիտուտը ՀՀ կազմակերպությունների հետ վերակնքել է 30 պայմանագիր՝ բաժանորդային սպասարկման աշխատանքների իրականացման նպատակով:

Կատարված աշխատանքների արդյունքում կազմվել են աշխատանքների հանձնման-ընդունման համապատասխան ակտերը հետևյալի մասով.

- տեղեկատվության տրամադրում ազգային ֆոնդում միջազգային (ԻՍՕ, ԻԷԿ, ԵՆ), միջպետական (ԳՕՍՏ), Հայաստանի Հանրապետության (ՀՍ) և արտասահմանյան երկրների (այդ թվում՝ ԱՊՀ) ստանդարտների և այլ նորմատիվ փաստաթղթերի մասին,
- կազմակերպությունների ստանդարտների ֆոնդի արդիականացում,
- ՀՀ ստանդարտների ամենամյա կատալոգի, ստանդարտների և տեխնիկական պայմանների եռամսյակային տեղեկատուների տրամադրում,
- բաժանորդին անհրաժեշտ ազգային ստանդարտների անվճար տրամադրում (թվով 200 հատ),
- խորհրդատվություն ստանդարտացման և համապատասխանության գնահատման փաստաթղթերի վերաբերյալ:

Բաժանորդային պայմանագրերի համաձայն Ստանդարտների ազգային ինստիտուտի հասույթը կազմել է շուրջ **4500000 ՀՀ դրամ**:


Ստանդարտների վաճառքը իրականացվում է պայմանագրային հիմունքներով ըստ հաստատված գնահաշվարկի և տրված հաշիվ-ապրանքագրի կամ անդորրագրի: Ազգային ստանդարտների վաճառքի դեպքում կազմակերպության կողմից ներկայացվում է անհրաժեշտ ստանդարտների գնման հայտ և կնքվում է պայմանագիր:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է **1984750 դրամի** (թվով 348 հատ) ստանդարտների վաճառք ՀՀ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին:

ՀՀ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին ստանդարտների վաճառքի 2009-2015թթ. քանակական և գումարային դինամիկան ներկայացված է գծանկարներ 1-ում և 2-ում:


Գծանկար 1.

ՀՀ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին ստանդարտների վաճառքի 2009-2015թթ. քանակական դինամիկան



Գծանկար 2

ՀՀ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին ստանդարտների վաճառքի 2010-2015թթ. գումարային դինամիկան, հազ.դրամ



Ինչպես երևում է վերը պատկերված ստանդարտների վաճառքի դինամիկայից, ստանդարտների վաճառքը որոշակի աճ է արձանագրել:


2015թ-ին Ինստիտուտը շարունակել է կազմակերպության ստանդարտների մշակման խորհրդատվական ծառայությունների մատուցումը, որի հիմնական նպատակն է օգնել միջին և փոքր ձեռնարկություններին և անհատ ձեռնարկատերերին մշակել կոնկրետ տեսակի արտադրանքի համար կազմակերպության տեխնիկական փաստաթղթերը՝ համաձայն գործող արդի ստանդարտացման փաստաթղթերի և տեխնիկական կանոնակարգերի պահանջների:

Կազմակերպության ստանդարտների և դրանց փոփոխությունների մշակման խորհրդատվական ծառայություններ են մատուցվել 5 կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար, որից հասույթը կազմել է **172.7 հազ. դրամ:**

2015 թվականին հաշվառման ներկայացված 191 տեխնիկական պայմաններ և դրանց 111 փոփոխություններ ենթարկվել են փորձաքննության և հաշվառվել են, որի հիմնական նպատակն է համապատասխանեցնել կազմակերպության նորմատիվ փաստաթուղթը Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը, տեխնիկական կանոնակարգերին և ազգային ստանդարտներին: Այդ աշխատանքներից ստացված հասույթը 2015 թվականին կազմել է **8243.8 հազ. դրամ:** 2014 թվականին հաշվառման ներկայացված 188 տեխնիկական պայմաններ և 179 ՏՊ փոփոխություններ ենթարկվել են փորձաքննության և հաշվառվել են: Այդ աշխատանքներից ստացված հասույթը 2014 թվականին կազմել է **8235 հազ. դրամ:**

Գծանկար .

Տեխնիկական պայմանների փորձաքննության աշխատանքներից հասույթը 2014-2015թթ.



3. ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտում գործել են 4 հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներ, այդ թվում՝

1. Երևանի փորձարկման լաբորատորիան,
2. Էլեկտրատեխնիկական փորձարկումների լաբորատորիան,
3. Նավթամթերքների և ֆիզիկաքիմիական փորձարկումների լաբորատորիան,
4. Գյումրիի փորձարկման լաբորատորիան:

3.1. ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Էլեկտրատեխնիկական փորձարկումների լաբորատորիան հաշվետու ժամանակաշրջանում ընդունվել է 77 հայտ, տրվել է 77 փորձարկման արձանագրություն: Իրականացվել են լաբորատորիայի հավատարմագրման հետ կապված աշխատանքները, որոնք դրական եզրակացություն են ստացել հավատարմագրման ազգային մարմնի կողմից:

Լաբորատորիայի հետագա գործունեության բարելավման համար ներկայումս անհրաժեշտ է վերազինել լաբորատորիան, ինչի կապակցությամբ կատարվել է առկա կարիքների գնահատում և ներկայացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը: Կարևորվում է նաև Հայաստանի Հանրապետության անդամակցությունը Միջազգային էլեկտրատեխնիկական կոմիտեին՝ փորձարկման մեթոդների ստանդարտների բազայի արդիականացման համար:

3.2. ՄՆՆԴԻ ԵՎ ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ

Երևանի փորձարկման լաբորատորիան միջազգային չափանիշներին համապատասխանող բարձրակարգ սարքավորումներով հագեցված լաբորատորիա է: Գյումրիի փորձարկման լաբորատորիայի հագեցվածությունը և հնարավորությունները համեմատաբար առավել թույլ են, առկա են հնամաշ սարքավորումներ, որոնք փոխարինման կարիք են զգում:

Հաշվետու ժամանակաշրջանում Երևանի փորձարկման լաբորատորիային ընդունել է սննդամթերքների և ոչ պարենային ապրանքների փորձարկման 520 հայտ և տրվել են նույնքան փորձարկման արձանագրություններ, Գյումրու ՓԼ՝ 879 հայտ և նույնքան փորձարկման արձանագրություններ:

Լաբորատորիան տեխնիկապես հագեցնելու նպատակով ձեռք է բերվել լաբորատոր լրակազմ՝ բաղկացած մի շարք փոխկապակցված բաղադրիչներից, որոնք թվում է նաև՝ հեղուկ նմուշներում սնդիկի որոշման կցորդը՝ ատոմաաբսորբման սպեկտրաֆոտոմետրի համար: Նշված սարքի ձեռքբերումը զգալիորեն կբարձրացնի կատարվող լաբորատոր փորձարկումների որակը և արդյունավետությունը:

3.3. ՆԱՎԹԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԵՎ ՖԻԶԻԿԱՔԻՄԻԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Այս լաբորատորիան տեղակայված է ք.Երևան, Հ. Էմինի 31ա տարածքում: Այն ունի միջին բավարար հագեցվածություն, ինչը թույլ է տալիս պատշաճ ձևով իրականացնել նավթամթերքների համար սահմանված պահանջների փորձարկումները:


Հաշվետու ժամանակաշրջանում նավթամթերքի փորձարկման լաբորատորիայում կատարվել է 1359 փորձարկում և տրվել է 1359 համապատասխանության եզրակացություն:

Նախապատրաստվել և հավատարմագրման նպատակներով ներկայացվել են լաբորատորիայի հավատարմագրման փաստաթղթերը, որոնց վերաբերյալ ստացվել է դրական եզրակացություն:

Լաբորատորիան կատարել է համապատասխան աշխատանքներ ներկայիս սարքավորումները ստուգաչափելու նպատակով:

Գծանկար 5

Ինստիտուտի հավատարմագրված լաբորատորիաներում կատարված փորձարկումների քանակը 2012-2015թթ.



4. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտի կազմում հավատարմագրված սննդի և պարենային հումքի, ոչ պարենային ապրանքների, ծառայությունների և կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինները (ՍՄ) շարունակել են իրականացնել համապատասխանության հավաստման աշխատանքներ: Ինստիտուտի սերտիֆիկացման մարմինների գործունեության ծավալներն շարունակում են գերակայել հանրապետությունում հավատարմագրված այլ ՍՄ նկատմամբ:

4.1. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում տրվել են՝

ա) ոչ պարենային ապրանքների գծով՝

605 ներկրվող արտադրանքի և 48 տեղական արտադրության համապատասխանության սերտիֆիկատ (ընդամենը՝ 653),

1100 ներկրվող արտադրանքի և 43 տեղական արտադրանքի համապատասխանության հայտարարագիր (ընդամենը՝ 1143),

իրականացվել է 44 համապատասխանության հսկողություն,

կատարվել է տեխնիկական պայմանների 41 փորձաքննություն, մերժում՝ 34 հատ:

Ոչ պարենային ապրանքների սերտիֆիկացման գծով 2014 թվականին ընդունվել է 1651 հայտ, 2015 թվականին՝ 1542 հայտ:

բ) սննդի և պարենային հումքի գծով տրվել են՝

706 (2014թ.՝ 961) համապատասխանության սերտիֆիկատ, այդ թվում՝ 282 ներկրվող արտադրանքի և 424 տեղական արտադրության համար.

2008 (2014թ.՝ 1025) համապատասխանության հայտարարագիր, այդ թվում՝ 1116 ներկրվող արտադրանքի և 892 տեղական արտադրության համար:

Իրականացվել է համապատասխանության հսկողություն՝ 35,

Տրվել է Մաքսային միության 263 հատ հայտարարագիր:

2015թ. ընդունվել է 1074 հայտ, 2014թ.՝ 1451 հայտ:

գ) ծառայությունների սերտիֆիկացման գծով՝

տրվել է սննդի ապահովման ծառայության 101 (2014թ.՝ 156) համապատասխանության սերտիֆիկատ,

121 (2014թ.՝ 109) ընկերություններում կատարվել է սննդի ապահովման ծառայության համապատասխանության հսկողություն:

Ծառայությունների սերտիֆիկացման գծով 2015 թվականին ընդունվել է 91 հայտ, 2014 թվականին՝ 153 հայտ:

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել և իրականացվել են արտադրանքի սերտիֆիկացման մարմինների հավատարմագրման աշխատանքները:

4.2. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտի կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմնի կողմից ընդունվել է կառավարման համակարգերի սերտիֆիկացման 20 հայտ:

18 կազմակերպություններում իրականացվել է կառավարման համակարգերի սերտիֆիկացում:

19 կազմակերպություններում իրականացվել են սերտիֆիկացված կառավարման համակարգերի համապատասխանության հսկողության աշխատանքներ:

Կազմակերպվել և իրականացվել են կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինների հավատարմագրման աշխատանքները:

Ներկայումս Ինստիտուտի կողմից աշխատանքներ են տարվում՝

ա) կազմակերպությունների էկոլոգիական կառավարման համակարգերի սերտիֆիկացման աշխատանքների ակտիվացման և համապատասխան իրազեկության ապահովման ուղղությամբ,

բ) սերտիֆիկացման մարմինների աշխատակիցների որակավորման բարձրացման ուղղությամբ՝ նրանց միջազգային չափանիշներին համապատասխանող դասընթացներին մասնակցության ու ԻՌԿԱ-ում որպես աուդիտորներ գրանցման միջոցով:

ՀՀ կառավարության 26.02.1998թ. թիվ 116 «Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության ամենամյա մրցանակներ սահմանելու և շնորհելու մասին» որոշման 2-րդ կետով հաստատված կարգի 15 կետի և ՀՀ կառավարության 2004 թվականի հունիսի 10-ի N 890-Ն որոշմամբ հաստատված «Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում ՀՀ կառավարության ամենամյա մրցանակների շնորհման» կարգի համաձայն, 2015թ. հոհտեմբերի 30-ի դրությամբ հավակնորդ կազմակերպությունների գնահատման աշխատանքներն ավարտվել են և փորձագիտական եզրակացությունները ներկայացվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:

5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ 14 կազմակերպությունից ստացված նամակների ու հայտերի համաձայն՝ 68 հայտատուից ձևավորվել է դասընթացների ունկնդիրների 17 խումբ և նախադիպլոմային ու արտադրական պրակտիկա անցկացնող բուհերի ուսանողների 3 խումբ: Սահմանված կարգով Ուսումնական կենտրոնում (այսուհետ՝ Կենտրոն) կազմակերպվել են **ընդհանուր, մասնագիտական և ներածական դասընթացներ**: Դասընթացներում սահմանված կարգով ներգրավվել և վերապատրաստվել է Ստանդարտների ազգային ինստիտուտի տարբեր ստորաբաժանումների 42 աշխատակից:

Ունկնդիրներին տրամադրվել են տեղեկատվական և ուսուցողական-մեթոդական նյութերի փաթեթներ: Դասընթացներն անցկացվել են ինտերակտիվ մեթոդներով ու միջոցներով՝ սլայդների ցուցադրում, թեստեր, գործնական խաղեր, գործնական առաջադրանքներ, տարբեր իրավիճակների վերլուծություններ, խաչաձև հարցումներ, «ուղեղային գրոհներ» և այլն: Ուսուցումը գնահատվել է թեստավորումների կամ քննությունների միջոցով, որոնց արդյունքներով ունկնդիրներին հանձնվել են վկայականներ, սահմանված կարգով գրանցելով գրանցամատյանում:

Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրենի կողմից 2015թ.-ի հունվարի 16-ին հաստատված տարեկան ուսումնական ծրագրի համաձայն 24 անվանում առանձին դասընթացների ուսումնական ծրագրերը ներկայացված են Ստանդարտների ազգային ինստիտուտի պաշտոնական էլեկտրոնային կայքում:

Հաղորդակցության տարբեր միջոցներով ապահովվել է ամենամսյա կապը ՀՀ կազմակերպությունների հետ՝ սննդարտադրող ընկերություններ, ՀՀ նախարարություններ և գերատեսչություններ, գիտահետազոտական ինստիտուտներ, համապատասխանության գնահատման մարմիններ, բուհեր: Հայտատուներն իրազեկվել են Կենտրոնում անցկացվող դասընթացների, մասին:

Իր առաջնահերթություններին դասելով ՀՀ բուհերի հետ կապը և համագործակցությունը, հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնն իրականացրել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Ապրանքագիտության ամբիոնի համապատասխան դասախոսների իրազեկում Կենտրոնի ծրագրերին, ինչպես նաև անցկացրել է ուսանողների ուսումնասիրտադրական պրակտիկա:

2012թ. ընդունված որակի ենթակառուցվածքի ոլորտի նոր օրենսդրությամբ ներկայումս Չափագիտության ազգային ինստիտուտում և Հավատարմագրման ազգային մարմնում ձևավորվել են նմանատիպ գործունեություն ծավալող Ուսումնական կենտրոններ, ինչը բացասաբար է ազդում ՍԱԻ ուսումնական կենտրոնի վրա՝ ծառայությունների հանդեպ պահանջարկի նվազման առումով: Բացի այդ, համաձայն հավատարմագրման մարմիններին ներկայացվող պահանջների վերաբերյալ գործող ՀՍ ԻՍՕ 17011 ստանդարտի պահանջների, այդ մարմինների կողմից ուսուցման կազմակերպումը դիտվում է որպես անաչառության կամ անկողմնակալության սկզբունքի խախտում և վտանգում է այդ մարմնի հանդեպ վստահությունը:

6. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հաշվետու ժամանակաշրջանում ՍԱԻ հասույթը կազմել է **273,1 մլն դրամ**: Ընդ որում, **աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների** ծախսը կազմել է **186,5 մլն դրամ** կամ հասույթի շուրջ 68%:

Աղյուսակ 2.

2015թ. Տարեկան եկամուտների փաստացի և կանխատեսված գումարները, հազ. դրամ

Ծառայության անվանումը	Կանխատեսում տարեկան	Ընդամենը տարեկան (փաստացի)	Տարբերություն
Համապատ. հավաստման ծառայություններ	75000,0	65525.0	-9475
Պարենային և ոչ պարենային ապրանքների փորձաքննության կատարում	90000,0	107518.0	17518
Ծառայությունների սերտիֆիկացում	12000,0	8790.0	-3210
Որակի և էկոլոգիական կառավարման համակարգերի սերտիֆիկացում	25000,0	37034.0	12034
Ստանդարտացման պետ. Պատվեր, ստ. Վաճառք, Տպ գրանցում, փորձաքննություն	83364,0	53140.0	-30224
Մասնագետների ուսուցում և վերապատրաստում	1000,0	1179.0	179
Ընդամենը	286364,0	273187,0	-13178,0

Աղյուսակ 3.

2015թ. տարեկան ծախսերի փաստացի և կանխատեսված գումարները, հազ. դրամ


Ծախսային հոդված	Կանխատեսում տարեկան	տարի	Տարբերություն
Աշխատավարձ	197358,0	186591.0	10767
Գրեն., տնտ., գրենակ., լաբ. նյութեր	6970,0	6237.0	733
Ներկայացուցչական ծախսեր	3200,0	4055.0	-855
Տրանսպ. պահպանման ծախսեր	8400,0	10192.0	-1792
Կապի ծառ., գրասենյակային	5100,0	6077.0	-977
Էներգիա, գազ	11500,0	11143.0	357

Վարձավճար	2200,0	2060.0	140
Գործուղման ծախսեր	15700,0	19456.0	-3756
Հավատարմագրման ծախսերծախսեր	5000,0	7590.0	-2590
Ստուգաչափման ծախսեր	2000,0	2095.0	-95
Չփոխհատուցվող հարկեր, տուրքեր	1400,0	1371.0	29
Այլ վարչական ծախսեր	1200,0	936.0	264
Մաշվածություն	19000,0	18945.0	46
Ընդամենը	284728,0	288854,0	4126,0

Աղյուսակներ 2 և 3-ի հիմնական գործունեությունից ստացված փաստացի **եկամուրներ**ի ու կատարված փաստացի **ծախսերի տարբերությունը կազմել է -15667 հազ. դրամ**: Հիմնական գործունեությունից վնասը փոխհատուցվել է այլ գործունեությունից ստացված եկամտով:

Գծանկար 6.

ՍԱԻ հիմնական գործունեությունից համախառն եկամտի 2011-2015թթ. դինամիկան, մլն.դրամ



ԽՆԴԻՐՆԵՐԸ.

Ընկերության հետագա զարգացման ու գործունեության արդյունավետության բարձրացման առումով կարելի է թվել ներկայումս առկա հետևյալ խնդիրները՝

ա) Պետական բյուջեից ստանդարտացման նպատակներով հատկացվող ֆինանսավորումը (**14,3 մլն դրամ**) չափազանց փոքր է և չի բավականացնում ամբողջ ծավալով ստանդարտացման աշխատանքների իրականացման համար: Ավելին, անհրաժեշտ է պետական բյուջեից առանձին ֆինանսավորում նախատեսել ռազմական ստանդարտների մշակման համար.

բ) 2012թ. ընդունված օրենսդրության համաձայն, տեխնիկական պայմանների խորհրդատվության և հաշվառման գործառույթի անհրաժեշտության վերացման պատճառով, այդ գծով մուտքերը զգալիորեն կրճատվեցին.

գ) Ընկերությունը զգալի վնասներ է կրում ոչ անհրաժեշտ և իր ներկայիս կարիքների համար չօգտագործվող անշարժ գույքի պահպանման ծախսերի ուղղությամբ: Այդ անշարժ գույքը հնարավոր է օտարել՝ ընկերության զարգացման ծրագրերի իրականացման նպատակով.

դ) Ստանդարտների վաճառքը և ստանդարտների նկատմամբ հեղինակային իրավունքների պահպանումը պատշաճ մակարդակով չի ընկալվում պետական մարմինների կողմից: Այսպես, լաբորատորիաների և սերտիֆիկացման մարմինների հավատարմագրման գործընթացում համապատասխան ստանդարտների ֆոնդի առկայությունը չի դիտվում որպես պարտադիր պահանջ, ինչը զգալիորեն ազդում է ստանդարտների վաճառքի մակարդակի վրա:

ե) տարբեր ստուգող մարմինների կողմից իրականացվող հաճախակի ստուգումները խաթարում են ընկերության բնականոն աշխատանքը և մեծ անհարմարություններ ստեղծում աշխատակիցների համար:

ԱՆԵԼԻՔՆԵՐԸ.

1. Պահանջարկի աճ

Ազգային մրցունակության բարձրացման համար ստանդարտացման և համապատասխանության հավաստման գործընթացների կարևորության գիտակցման մակարդակի բարձրացումը նպաստել է ՍԱԻ ծառայությունների, ծրագրերի և փորձի պահանջարկի աճին: Վերջին տարիների ընթացքում հանրապետությունում կարիք է առաջացել վերանայել և արդիականացնել գործող տեխնիկական կանոնակարգերը, ներդաշնակեցնել դրանք Եվրասիական Տնտեսական Միության, Եվրոմիության և միջազգային պահանջներին: Ելնելով Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամակցության և Առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացման միջազգային համաձայնագրի պահանջներից, ինչպես նաև Եվրասիական Տնտեսական Միության Համաձայնագրի ստորագրման գործընթացի պահանջներից, դեռևս զգալի աշխատանքներ պետք է կատարվեն ազգային ստանդարտները և տեխնիկական օրենսդրությունը միջազգային և եվրոպական

ստանդարտներին ու պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ: ՍԱԻ ձեռնամուխ է լինելու առաջիկա հինգ տարիներին այդ ոլորտում ապահովել առնվազն 80%-ոց ներդաշնակեցման մակարդակ: Բացի այդ, լիովին կվերանայվի ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդը և հին, կիրառության համար ոչ պիտանի ստանդարտները կփոխարինվեն նորերով: Միաժամանակ, այդ գործընթացը կնպաստի հանրապետության տնտեսության մեջ նոր գիտելիքի ու տեխնոլոգիայի ներդրմանը, ինչն էլ իր հերթին հիմք կհանդիսանա տնտեսական աճի ու արտահանման ծավալների մեծացման համար:

2016 թվականին նախատեսվում է, մասնավորապես, հանրապետությունում գործողության մեջ դնել առնվազն 300 նոր ստանդարտներ՝ տնտեսության գերակա ոլորտներում: 2016 թվականին ընկերությունը մի շարք միջոցառումներ կիրականացնի (ուսուցում, իրազեկման սեմինար, կլոր սեղաններ) ստանդարտների վաճառքի խթանման ուղղությամբ:

2. Ռեսուրսներ

Ըստ ՍԱԻ գնահատման, ներկայումս մատչելի ռեսուրսների մակարդակի անփոփոխ մնալու դեպքում ընթացիկ և ապագա պետական գերակայություններին արդյունավետ կերպով աջակցությունը, ինչպես նաև ՍԱԻ առաքելության և ռազմավարական նպատակների իրականացումը զգալիորեն կբարդանա: ՍԱԻ ֆինանսավորման մեծագույն բաժինը ստացվում է համապատասխանության հավաստման աշխատանքներից, որոնց պահանջարկը սակայն վերջին տարիներին զգալի անկում է ապրել՝ պարտադիր սերտիֆիկացման պահանջների վերացման պատճառով: Երկարաժամկետում այդ իրավիճակը կարող է նպաստել ՍԱԻ ֆինանսավորման պլանում վնասի առաջացմանը: Այդ իրավիճակի շտկումը հնարավոր է միայն սերտիֆիկացման ծառայությունների պահանջարկի աճի խթանման միջոցով: Ընդ որում, նշված խնդիրը չպետք է լուծվի ձեռնարկատերերի համար լրացուցիչ խոջընդոտների ստեղծման միջոցով: Փոխարենը, շեշտը պետք է դրվի սպառողների շահերի պաշտպանության, շուկայում արտադրանքի անվտանգության մակարդակի բարձրացման նպատակների վրա:

Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև նոր տեխնիկական կանոնակարգերի գործողության արդյունավետության ապահովումը, Եվրասիական Տնտեսական Միության պահանջների իրականացումը **2016 թվականի ընթացքում** նպատակահարմար է տեխնիկական կանոնակարգման ոլորտներում ներդնել մաքսագերծման փուլում արտադրանքի պարտադիր համապատասխանության հայտարարագրման պահանջը:

3. Արտադրանքի անվտանգությունը

ՍԱԻ իր համապատասխանության հավաստման և լաբորատոր փորձաքննությունների ծառայությունների միջոցով մշտապես պայքարում է շուկա կեղծ և վտանգավոր արտադրանքներ ներմուծելու դեմ: Լինելով Հայաստանում ամենախոշոր սերտիֆիկացման մարմինը ՍԱԻ աշխատանքներ է տանում նաև աստիճանաբար կամավոր սերտիֆիկացման ընթացակարգերի մշակման ու կիրառման ուղղությամբ: Առաջիկա երեք տարիներին նպատակահարմար է աշխատանքներ տանել ՍԱԻ լաբորատոր հզորությունների մեծացման, ժամանակակից սարքավորումների ներդրման ուղղությամբ, ինչի շնորհիվ կապահովվի տեխնիկական կանոնակարգման ոլորտներում բարձր որակի փորձարկումների ապահովումը:

Ի վերջո, այդ աշխատանքները Հայկական շուկայում որակյալ և արտահանման կողմնորոշում ունեցող ապրանքների արտադրությունն ապահովելու նպատակ են հետապնդելու համար: Հատկապես կարևորվում է նավթամթերքի և ցածր լարման էլեկտրատեխնիկական ապրանքների լաբորատորիաների հզորացումը, հանրապետությունում բացակայող նոր լաբորատորիաների հիմնադրումը (օրինակ՝ անվադողերի, տեքստիլի և այլն):

Ընդհանուր առմամբ, առաջարկվում է **2016 թվականին** նախապատրաստել հանրապետության լաբորատոր կարողությունների հզորացմանն ուղղված համալիր ծրագիր, որով ՍԱԻ հիմքի վրա կհիմնադրվի Լաբորատոր փորձարկումների նորագույն և արդիական կենտրոն: Այդ ծրագրի ֆինանսավորումը հնարավոր է ապահովել ՍԱԻ որոշ անշարժ գույքի օտարման հաշվին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության աջակցությամբ:

4. Իրազեկության բարձրացում, ուսուցում

ՍԱԻ կազմում գործում է Ուսումնական կենտրոնը, որը մատուցում է ստանդարտների ուսուցման ծառայություններ: Առաջիկա երեք տարիներին ՍԱԻ-ը պլանավորում է վերնայել կենտրոնի ուսումնական ծրագրերը, մշակել ու ներդնել նոր ծրագրեր ուղղված ստանդարտացման հիմունքների, ստանդարտների կիրառման հնարավորությունների և եղանակների, ինչպես նաև ստանդարտացման և համապատասխանության գնահատման ընթացակարգերի դասավանդմանը: ՍԱԻ-ն կներդնի իր բոլոր ջանքերն ունկնդիրների շրջանակի անընդհատ ընդլայնման ուղղությամբ:

2016 թվականին կարևորվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համագործակցության ընդլայնումը, նոր սերնդի պատրաստմանն ուղղված ծրագրերի նախապատրաստումը և իրականացումը, ինչպես նաև նոր դասավանդողների ներգրավումը:

5. Ազգային համագործակցության ուժեղացում

ՍԱԻ-ի գործունեության հաջողության գլխավոր գրավականը ազգային շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցությունն է ստանդարտացման գործընթացներին: ՍԱԻ կարևորում է նաև ազգային գործընկերների շրջանում ստանդարտացման վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը: ՍԱԻ-ին աշխատանքներ է տանելու ազգային գործընկերների մոտ իրենց ոլորտային ստանդարտների վերլուծության և մշակման ունակությունների ձևավորման ուղղությամբ: 2016 թվականին այդ աշխատանքները և շահագրգիռ կողմերի հետ քննարկումները պետք է օժանդակեն Ինստիտուտին ստանդարտացման նոր ռազմավարական ծրագրի ձևավորմանը, որը ուղղված կլինի տնտեսության գերակա ճյուղերի, ինչպես նաև հանրային ամենամեծ կարևորություն ունեցող խնդիրների լուծմանն ուղղված ստանդարտների մշակմանը:

6. Միջազգային ստանդարտացման կազմակերպությունների հետ համագործակցությունը և տեխնիկական աշխատանքներին մասնակցությունը

ՍԱԻ-ը անդամակցում է ԻՍՕ, ՍԵՆ և Միջպետական ստանդարտացման ու չափագիտության խորհուրդ ստանդարտացման կազմակերպություններին: ՍԱԻ-ն անընդհատ աշխատանքներ է տանում Հայաստանի միջազգային վարկանիշի բարձրացման ուղղությամբ: Այսպես, միայն 2009թ. ընթացքում ԻՍՕ-ի վարկանիշային 105 անդամների ցուցակում ՍԱԻ-ն հաջողվել է բարելավել իր վարկանիշը, 91-րդ տեղից տեղափոխվելով 65-րդ տեղը: ՍԱԻ ներկայումս ԻՍՕ Խորհրդի անդամ է՝ 2015-2017 թվականների ժամկետով, ինչը պարտադրում է

առաջիկա երեք տարիներին Ինստիտուտին ստանձնել ակտիվ դերակատարում միջազգային ստանդարտացման ասպարեզում:

ՍԱԻ-ի միջազգային համագործակցությունը միտված է լինելու առավել ընդլայնմանը: Մասնավորապես, ՍԱԻ-ն կդիմի ՀՀ կառավարությանը և ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը՝ ՄԷԿ (Միջազգային էլեկտրատեխնիկական կոմիտե) անդամակցության առաջարկով, ինչի շնորհիվ հնարավորություն կստեղծվի Հայաստանի էներգետիկ համակարգի, նորատոմակայանի կառուցման, բաշխիչ ցանցերի արդիականացման և այլ նպատակներով ապահովել արդիական տեխնոլոգիաների և միջազգային ստանդարտների կիրառումը:

7. Մարդկային ռեսուրսներ

Առկա ծրագրերը և ծառայությունները հնարավոր չի լինի իրականացնել առանց բանիմաց և որակյալ տեխնիկական անձնակազմի: Միջազգային ասպարեզում անընդհատ ծագող նոր թեմաները և ոլորտները (օրինակ, բիովառելիք, նանոտեխնոլոգիաներ, կլիմայի փոփոխություն և այլն) պահանջում են պատրաստել նոր մասնագիտացված կադրեր: Այս նպատակով ՍԱԻ-ն անընդհատ ներդրումներ է կատարում իր անձնակազմի վերապատրաստման ուղղությամբ: ՍԱԻ մասնագետներն հաճախ ուղղարկվում են արտասահման տարբեր թրեյնինգների ու իրազեկման սեմինարների մասնկցելու համար: Այս գործընթացը մշտապես գտնվելու ՍԱԻ ուշադրության կենտրոնում և շարունակական բնույթ է կրելու: